



Մեր տնտեսական զարգացման մոդելը դեռևս տեխնաժին է

բնապահպանական խնդիրների
ֆնանսավորում ոչ ֆորմալ մթնոլորտում

Բնապահպանական խնդիրները ոչ ֆորմալ մթնոլորտում քննարկելու գաղափարը կլոր սեղանի շուրջ էր հավաքել ՀՀ բնապահպանության նախարարության, գիտական ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին: Նախարար Արծվիկ Մինասյանը հրավերին արծագանքած մասնագետների հետ քննարկել է բնապահպանության ռազմավարությունը, անելիքները, ոլորտի գերակա ուղղությունները: Գերատեսչության ղեկավարի պաշտոնն ստանձնելուց անմիջապես հետո Արծվիկ Մինասյանը սկսել է հանդիպումները ոլորտում բազմամյա գործունեության փորձ ունեցող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, գիտնականների և մասնագետների հետ: «Գալով նախարարություն չեմ դադարել տնտեսագետ լինել, բայց վերանայել եմ իմ մոտեցումները, և վստահաբար կարող եմ ասել, որ երկրի զարգացումը չեմ պատկերացնում առանց շրջակա միջավայրի բարելավման, պահպանման: Եվ հիմա հասկանում եմ այն հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին, որոնք մտահոգություն ունեն, որ տնտեսության զարգացումը երբեմն ընթանում է հաշվի չառնելով սոցիալական եւ էկոլոգիա-

կան կոմպոնենտները: Այո՛, մենք էստեղ պետք է վերանայենք մոտեցումները և անկեղծանամ, որ կառավարության ներսում էլ է ընթանում այս թեմայի շուրջ բանավեճեր», - ասել է նա: Բնապահպանության նախարարը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման մոդելը տեխնաժին է համարում և ներկայում աշխատում են նոր ռազմավարության վրա, ինչը ոլորտում հիմնարար փոփոխություններ է նախատեսում: «Այս իրավիճակից դուրս գալու ելքը, իմ խորին համոզմամբ, նոր քաղաքականության իրականացումն է: Քաղաքականություն, որը տեխնաժին տնտեսական աճից անցում կկատարի կայուն զարգացմանը: Շրջակա միջավայրի պահպանումը, բարելավումը պետք է իրականացվի կայուն զարգացման հիմքերի վրա՝ հաշվի առնելով սերունդների նկատմամբ պատասխանատվությունը», - նշել է բնապահպանության նախարարը:

Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները պայմանավորվեցին այս ձևաչափով կրկին հանդիպել: Որոշվեց մի շարք ծրագրերի հերթական քննարկումը կազմակերպել ՀՀ ԱԺ ընտրություններից հետո:

Սելավների դեմ միասնական ճակատով



տեի և "Վեոլիա Ջուր" ՓԲԸ-ի ներկայացուցիչների հետ կազմակերպված քննարկումների արդյունքները՝ Արծվիկ Մինասյանը շեշտել է, որ խնդրի բազմակողմանի դիտարկման նպատակով անհրաժեշտություն էր առաջացել ծանոթանալ նաև ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության դիրքորոշմանը: Հարցի առնչությամբ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության մոտեցումները ներկայացրել են խորհրդի նիստին հրավիրված Հիդրոմետ ծառայության հիդրոլոգիական կանխատեսումների բաժնի պետ Ամալյա Միսակյանը և Փրկարար ծառայության բնակչության պաշտպանության և աղետների հետևանքների վերացման կազմակերպման վարչության տարերային աղետների բաժնի պետ, փ/ծ փոխգնդապետ Արմեն Դաշյանը: Նախարարը տեղեկացնելով, որ ձմռան ամիսներին որոշ հատվածներում գրանցվել են նորմայից մի քանի անգամ ավել տեղումներ, հայտնել է, որ ջերմաստիճանի կտրուկ բարձրացման և հորդառատ անձրևների դեպքում մի շարք գետերում, այդ թվում՝ Հրազդան գետի մերձափնյա շրջաններում հնարավոր են ջրածածկումներ և ողողումներ, որոնց վերաբերյալ կանխատեսումներ հնարավոր է անել միայն 3-4 օր առաջ, երբ հստակ տվյալներ կլինեն մոտեցող տաք օդային հոսանքների ու դրանց ուղեկցող ինտենսիվ անձրևների մասին:

շարունակությունը էջ 3 /

ՀՀ բնապահպանության նախարարին կից հասարակական խորհրդի հերթական նիստի օրակարգում նախարար Արծվիկ Մինասյանի առաջարկությամբ կրկին ընդգրկվել էր Գետառ և Հրազդան գետերի սելավատարների և Ավանի վարչական տարածքում գտնվող Երևանի սելավընդունիչների հարցը: Ամփոփելով նախորդ նիստում գիտական հաստատությունների մասնագետների, Երևանի քաղաքապետարանի, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ջրային տնտեսության պետական կոմի-



• Սելավների դեմ միասնական ճակատով

Սկիզբը էջ 2 /

Ա. Դաշյանը հայտնել է, որ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը մշակել և ներկայացրել է առաջարկներ հնարավոր գարնանային վարարումների և սելավների ռիսկերից ՀՀ բնակավայրերը պաշտպանելու նպատակով անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումների իրականացման վերաբերյալ: Բանախոսներն իրենց ելույթներում արձանագրել են հնարավոր հեղեղումների բարձր ռիսկը: Նախարար կարևորելով խնդրին հիմնարար և համակարգային լուծում տալու անհրաժեշտությունը, միաժամանակ օրախնդիր է համարել ստեղծված իրավիճակին և հնարավոր ռիսկերին օպերատիվ արձագանքելու ու կանխարգելիչ գործողությունների իրականացումը: Այս նպատակով հասարակական խորհուրդը որոշել է դիմել գործադիրին՝ միջգերատեսչական համձնաժողով ձևավորելու առաջարկով, ընդգրկվել նաև Երևանի քաղաքապետարանի մասնագետներին, ոլորտի գիտնականներին և միջազգային կազմակերպություններին:

Ռի ներկայացուցիչներին՝ /միջազգային փորձը ներկայացնելու նպատակով/: Խորհուրդը որոշել է դիմել նաև Երևանի քաղաքապետարանին և ՀՀ տարածքային զարգացման և կառավարման նախարարությանը՝ իրականացնելու իրավիճակին համահունչ օպերատիվ միջոցառումներ՝ հնարավոր ռիսկերին դիմակայելու համար:

«Շրջակա միջավայրի պահպանության իրավական կենտրոն» ՀԿ նախագահ Աիդա Իսկոյանը ներկայացրել է էկոլոգիական օրենսդրության զարգացման առաջնահերթությունները: Բանախոսը թվարկել է էկոլոգիական օրենսդրության առանձնահատկությունները և հայտնել, որ կան բնապահպանական առանձին ոլորտներ, որոնք օրենսդրորեն կարգավորված չեն: Նախարարն առաջարկել է մասնագետների հետ քննարկումների արդյունքում ներկայացնել անհրաժեշտ օրենքների ցանկը, որոնց ուղղությամբ հետագայում կծավալվեն հետևողական աշխատանքներ:

Բուսաբանական այգու, Ամուլսարի եւ մյուս հրատապ հարցերը գիտատեխնիկական խորհրդի օրակարգում

Նապահպանության նախարարությունում կայացել է նախարարին կից գիտատեխնիկական խորհրդի հերթական նիստը, որը վարել է նախարար Արծվիկ Սինայանը: Երևանի բուսաբանական այգու կենսաբազմազանության և գիտակրթական կենտրոնի զարգացման հեռանկարները հարցի շուրջ զեկույցով համդես է եկել ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտի տնօրեն Ժիրայր Վարդանյանը: Բանախոսը մանրամասն ներկայացրել է բուսաբանական այգու՝ որպես ինքնատիպ ազգային արժեք ներկայացնող գիտական, էկոլոգիական հաստատության գործունեությունը, անդրադարձել առավել կենսական հիմնախնդիրներին, այդ թվում, ոռոգման համակարգի հիմնանորոգմանը, նաև բնակչության համար բացօթյա բարեկարգ ռեկրեացիոն գոտու ստեղծման անհրաժեշտությանը: ՀՀ ԳԱԱ էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնի տնօրեն Ա. Սաղաթեյանը

ներկայացրել է Ամուլսարի հանքավայրի շահագործման էկոլոգիական և տեխնիկական ռիսկերի մասին զեկույցը: ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի փոխտնօրեն, կենսաբանական գիտությունների դոկտոր Սամվել Բալոյանը ներկայացրել է «Գիտական հետազոտությունների արդյունքները էկոլոգիական հիմնախնդիրների լուծման գործում» հայեցակարգը: Անդրադարձ է եղել բնապահպանության ոլորտում գիտական հետազոտությունների վերաբերյալ ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին, գիտական հետազոտությունների անհրաժեշտությանը, կադրային խնդիրների: Ձեկույցներում արժարժված հարցերի առավել խորքային քննարկման նպատակով դրանց անդրադարձ կարվի նաև հաջորդ նիստում:



Կառավարությունը սահմանել է տուգանքների նոր սակագներ

Կառավարությունը Փետրվարի 2-ին ԱԺ-ի քննարկմանն է ներկայացրել «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու նախագիծը: Բնապահպանության փոխնախարար Սիմոն Պապյանն ասաց, որ 2010-ին կառավարության կողմից հաստատվեց Կարմիր գիրքը՝ բույսերի և կենդանական տեսակների: Այնտեղ բավականին փոփոխություններ տեղի ունեցան և հիմա բնականաբար, պետք է փոխվեն այդ բույսերի և կենդանիների ոչնչացման համար սակագները: Ըստ նախագծի, սահմանվել է, օրինակ, որ Կարմիր գրքում գրանցված բույսերից 1 կգ ապօրինի հավաքելու համար քաղաքացիները պետք է վճարեն 10- 20 հազար դրամ: Գործող օրենքով, եթե խոշոր եղջերավոր անասունները արածելիս կան ապօրինի խոտհունձի ժամանակ վնասում էին անտառային կուլտուրաներ, մատղաշ ծառեր, պետք է վճարեն 100 և 150 դրամ: Կառավարությունն առաջարկել է տուգանքը դարձնել 1000 և 1500 դրամ, բայց Տաճատ Վարդապետյանը ժողովրդի սոցիալական ծանր վիճակը հաշվի առնելով՝ առաջարկել է կիրառել գործող օրենքով նախատեսված սակագնի կրկնակին՝ 200 և 300 դրամ, ինչն ընդունվել է: Ուշագրավ է, որ նախագծով կառավարությունը նախատեսում է 15 հազար դրամով տուգանել այն քաղաքացիներին, որոնք ապօրինի կվնասեն, կորսան անդրկովկասյան մողեսիկ: Թիթեռների, ճպուռների, բզեզների համար 3000 դրամ տուգանք է սահմանվում: Պակաս չեն գնահատվել նաև մրջյունները, նրանց ապօրինի ոչնչացնելու համար դարձյալ տուգանքը 3000



դրամ է: Հայկական մկնիկ վնասելը շատ քան կնստի քաղաքացիների վրա՝ 25 հազար դրամ: Սևանի Կողակի և Բեղլուի ապօրինի որսը 10 և 25 հազար դրամի տուգանք է առաջացնելու: Այսպես՝ մեկ առ մեկ սահմանվել են չղջիկներ, ոգնիներ, խխունջներ և մյուս արժեքավոր կենդանիներ ու բույսեր ոչնչացնելու տուգանքները: ՀՀԿ խմբակցության պատգամավոր Խոսրով Հարությունյանն ասաց. «Օրինակ, սողունների համար 2000 դրամ տուգանք ենք սահմանել, բայց դա շատ դժվար է վերահսկել: Բացի այդ, եթե այդքան կարևոր նշանակություն ունի դամեր կենդանական աշխարհի համար՝ ինչո՞ւ այդքան էժան՝ ընդամենը 2 հազար դրամ»: Փոխնախարարը համաձայնեց, որ իսկապես, դա լուրջ խնդիր է: Նա ասաց, որ հիմա նախագծեր են պատրաստում, որ կարողանան ավելի իրական վերահսկողության մեխանիզմներ դնել. «Խոշոր կենդանիների մասով անցյալ տարի մոտ 60 մլն դրամի տուգանք ենք կիրառել՝ Բեզդարյան այծի մասով, արջերի մասով, սողունների մասով դեռ չունենք»: Սիմոն Պապյանն ասաց, որ կփորձեն ժամանակակից մեխանիզմներ դնել, որ կարողանան վերահսկել գոնե հատուկ պահպանվող տարածքներում: Սա կանխարգելիչ միջոց է: Ըստ փոխնախարարի, պետք է հանրության մտածելակերպը փոխվի. «Եթե չփոխվի, մենք չենք կարող ամեն մի քաղաքացու գլխին մի տեսուչ կանգնացնել»:

Բնապահպանական վճարներից համայնքներին եւս մաս կհանվի



Կառավարության Փետրվարի 2-ի նիստում վարչապետ Կարեն Կարապետյանը ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Սինասյանին հանձնարարեց բնապահպանական վճարներից համայնքներին մաս հանել: «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարումները նպատակային օգտագործելու մասին ՀՀ օրենքով բնապահպանական վճարներից մասհանումներ են կատարվում այն համայնքներում, որոնց տարածքում նշված ընկերությունների գործունեությունը թողնում է վնասակար ազդեցություն», - ասաց Կարապետյանն ու հավելեց, որ բնապահպանական վճարների բաշխման համակարգը համայնքների միջև թերի է կանոնակարգված: Վարչապետը ՀՀ բնապահպանության նախարարին հանձնարարեց երկամսյա ժամկետում մշակել ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին ՀՀ օրենքով մասհանումներ ստացող ազդակիր համայնքների որոշման կարգ, որը կներառի բոլոր ազդակիր համայնքներին ու նպատակ կունենա հնարավորինս նվազեցնել վնասակար ազդեցությունները:

Երբ բնապահպանը զգոն է

Մեկ շաբաթվա ընթացքում բնապահպանական խախտումների դիմաց 33 պետական բյուջե է մուտքագրվել 1,7 մլն դրամ

33 բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության կողմից 27.02-03.03.2017 թթ. ժամանակահատվածում իրականացված շրջայցերի, ԲՊՏ վարույթին հանձնված գործերի քննության և հաշվետվությունների ընդունման գործընթացում հայտնաբերված խախտումների արդյունքում կայացվել է 650,0 հազ.դրամ ընդհանուր գումարի վարչական տուգանքի 13 որոշում և հաշվարկվել 1002,2 հազ. դրամ ընդհանուր գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս: Մասնավորապես՝

Բուսական աշխարհի պահպանության ոլորտ.

Կազմվել է վարչական տուգանքի 12 որոշում՝ 600,0 հազ. դրամ գումարով և հաշվարկվել է 1002,2 հազ. դրամ ընդհանուր գումարի շրջակա միջավայրին պատճառված վնաս, որից՝

Տավուշի տարածքային բաժնի վարույթին հանձնված գործերի քննության արդյունքում 4 ֆիզիկական անձի նկատմամբ ապօրինի հատված 4 ծառի համար կայացվել է 200,0 հազ. դրամ ընդհանուր գումարի վարչական տուգանքի 4 որոշում և հաշվարկվել է 256,7 հազ. դրամ ընդհանուր գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս: Բաժնի կողմից հայտնաբերված ապօրինի ծառահատման դեպքի համար 1 ֆիզիկական անձի նկատմամբ ապօրինի հատված 2 ծառերի համար կայացվել է 50,0



հազ. դրամի վարչական տուգանքի որոշում և հաշվարկվել է 74,25 հազ. դրամի շրջակա միջավայրին հասցված վնաս: Լոռու տարածքային բաժնի վարույթին հանձնված գործերի քննության արդյունքում 6 ֆիզիկական անձանց նկատմամբ ապօրինի հատված 12 ծառի համար կայացվել է 250,0 հազ. դրամ ընդհանուր գումարի վարչական տուգանքի 5 որոշում և հաշվարկվել է 485,25 հազ. դրամ ընդհանուր գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս: Բաժնի կողմից հայտնաբերված ապօրինի ծառահատման դեպքի համար ֆիզիկական անձի նկատմամբ ապօրինի հատված 3 ծառի համար կայացվել է 50,0 հազ. դրամի վարչական տուգանքի որոշում և հաշվարկվել է 111,0 հազ. դրամի շրջակա միջավայրին հասցված վնաս: Սյունիքի տարածքային բաժնի վարույթին հանձնված գործի քննության արդյունքում ծառահատման դեպքի համար կայացվել է 50,0 հազ. դրամի վարչական տուգանքի որոշում: Վայոց ձորի տարածքային բաժնի կողմից հայտնաբերված ապօրինի ծառահատման դեպքի համար հաշվարկվել է 75,0 հազ. դրամի շրջակա միջավայրին հասցված վնաս:

Թափոնների տեղադրման ոլորտ.

Վտանգավոր թափոնների անձնագրերը լիազոր մարմնի հետ չհամաձայնեցնելու համար Շիրակի տարածքային բաժինը մեկ տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ կիրառել է 50,0 հազ. դրամի վարչական տուգանք: Վարչարարության և փորձաքննության բաժինը հաշվետու ժամանակաշրջանում դատական ակտերի հարկադիր կատարման է ներկայացրել 4 վարչական տուգանքի որոշում՝ 350,0 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով և 2 վնասի փոխհատուցման որոշում՝ 54,0 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով:



Խոսրովի անտառում աչալուրջ են

«Խոսրովի անտառ» պետական արգելոցի աշխատակիցների կողմից շարունակվում են «Խոսրովի անտառ» պետական արգելոց», «Խոր Վիրապ», «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրերի միջոցառումները պատշաճ իրականացնելու համար իրականացվել են շուրջօրյա հերթապահություններ և շրջագա-

յություններ, որի արդյունքում չի հայտնաբերվել և չի արձանագրվել արգելոցային ռեժիմի խախտման դեպքեր:

«Խոսրովի անտառ» պետական արգելոցի գիտական բաժնի աշխատակիցների կողմից իրականացվել են գիտական ուսումնասիրություններ պետական արգելոցի և պետական արգելավայրերում բուսական և կենդանական աշխարհի գենոֆոնդի պահպանման ու նրանց էկոհամակարգերի ուսումնասիրման նպատակով:

Կենդանիների պոպուլացիային և միգրացիոն ուղիներին հետևելու համար Վայրի բնության հիմնադրամի WWF/ հետ համատեղ շարունակվում են տեսա և ֆոտոբնիխների օգնությամբ կատարել կենդանական աշխարհի սեզոնային միգրացիային ուղղված աշխատանքներ:



Հասարակական խորհրդի նիստի օրակարգային երրորդ հարցի շրջանակներում Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանության հիմնադրամի նախագահ Ռուբեն Խաչատրյանը ներկայացրել է գայլերի թվաքանակի կարգավորման այլընտրանքային գի-

Գայլերի թվաքանակի կարգավորման հարցը մասնագետների ուշադրության կենտրոնում

տական մոտեցում, ինչը նվազագույնի կհասցնի որսալու միջոցի կիրառումը: Նախաձեռնությունը հավանության է արժանացել բնապահպանական հասարակական կազմակերպությունների կողմից: ՀՀ բնապահպանության նախարարն առաջարկել է մոտեցումը գրավոր ներկայացնել, որպեսզի կազմակերպվի մասնագիտական քննարկում՝ նրա արդյունավետությունը գնահատման և առկա իրավիճակում մեթոդի կիրառման նպատակահարմարությունը որոշելու համար:

Էկոկրթական դասընթացներ «Ձանգեզուր» կենտրոնում

Նախարարության «Ձանգեզուր» կենտրոնում համալիրի տնօրինության տակ գտնվող ԲՀՊՏ-ներում շարունակվում են շուրջօրյա հերթապահությունները, իրականացվում են պարբերական շրջայցեր:

«Ձանգեզուր» կենտրոնում համալիրի գիտության բաժնի աշխատակիցների կողմից կազմակերպվել են հանդիպումներ մասնավորապես «Շիկահող» պետական արգելոց մասնաճյուղին հարակից՝ Շիկահող, Սրաշեն, Ծավ, և Ներքին հանդ գյուղերի դպրոցականների հետ, որի նպատակներ ծանոթացնել աշակերտներին «Ձան-

գեզուր» կենտրոնում համալիրի տարածքում հանդիպող և ՀՀ կարմիր գրքում գրանցված հազվագյուտ և անհետացող բուսական և կենդանական տեսակներին: Համդիպման ընթացքում ներկայացվել են նրանց դերն ու նշանակությունը բնության մեջ և շրջակա միջավայրում:



Սոցիոլոգիան անելիք ունի նաեւ մեր երկրի կենսաբազմազանության ոլորտում



«Ընկերության նախարարությունում ներկայացվել են Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության /GIZ/ նախաձեռնությամբ Հայաստանում անցկացված «Կենսաբազմազանության վերաբերյալ KAP (գիտելիք, վերաբերմունք, փորձառություն)» սոցիոլոգիական ուսումնասիրությունների արդյունքների նախնական վերլուծությունները: GIZ-ի պատվերով ուսումնասիրությունն իրականացրել է «Այ Փի Ես Սի» քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտը /IPSC/:

ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանը քննարկման մեկնարկին նշել է, որ «Կենսաբազմազանության ինտեգրված կառավարումը /ԿԻԿ/ Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում կատարված ուսումնասիրությունը կարևոր հենք է հանրապետության հարուստ կենսաբազմազանության պաշտպանման ուղղությամբ իրականացվող միջոցառումների արդյունավետության բարձրացման համար:

«Կենսաբազմազանության ինտեգրված կառավարումը /ԿԻԿ/ Հարավային Կովկասում» ծրագրի հայաստանյան թիմի ղեկավար Քարսեն Շուլցը իր խոսքում նշել է, որ կառավարությունը և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները պետք է իմանան, թե բնակչությունը ինչպես է ընկալում կենսաբազմազանությունը: Բանախոսը կարևորել է այն հանգամանքը, որ սոցիոլոգիական հարցման հարցաթերթիկը մշակվել է ՀՀ բնապահպանության նախարարության մասնագետների հետ միասին, ինչը նպաստել է ուսումնասիրության բարձր արդյունավետությանը: Ք. Շուլցը հայտնել է, որ եթե ՀՀ կառավարությունն անհրաժեշտ համարի, ապա նման հետազոտություն կարվի նաև 3 տարի հետո՝ պարզելու համար, թե այդ ընթացքում իրականացված գործողությունների արդյունքում բնակչության իրազեկվածության մակարդակը բարձրացել է, թե ուրիշ:

«Այ Փի Ես Սի» քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի /IPSC / ներկայացուցիչները մատուցել են ուսումնասիրության մեթոդիկական և արդյունքների նախնական ամփոփված տվյալները: Սոցիոլոգիական հարցումների արդյունքները բացահայտել են ՀՀ քաղաքացիների հետաքրքրվածությունը կենսաբազմազանության և դրա պահպանման նկատմամբ: Գնահատելով հետազոտության բազմակետորությունը՝ նախարարի տեղակալ Խ. Հակոբյանը կարևորել է ստացված արդյունքները՝ կենսաբազմազանության պահպանմանն ուղղված գործնական միջոցների կիրառման, բնապահպանական թիրախային կրթության իրականացման համար: Որոշվել է արդյունքների վերլուծության ավարտից հետո պարբերական հանդիպումներով դրանք հասանելի դարձնել հանրության և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար:

Տրամադրվել է վայրի կենդանիների տեսակների սոցիալական նպատակներով օգտագործման 34 կտրոն

«Ընկերության նախարարության աշխատակազմի կենսառեսուրսների կառավարման գործակալությունը տրամադրել է «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիայով (CITES) կարգավորման 3 թույլտվություն (հավաստագիր):

Տրամադրվել է նաև ՀՀ տարածքում վայրի կենդանիների տեսակների սոցիալական նպատակներով օգտա-



գործման (սիրողական որս և ձկնորսություն, ձկնորսության և որսի օբյեկտ չհանդիսացող կենդանիների որս) 34 կտրոն և պայմանագիր, ինչպես նաև վայրի կենդանիներ և կենդանաբանական հավաքածուներ ու առանձին մուշների արտահանում Հայաստանի Հանրապետության տարածքից՝ 1 թույլտվություն:

Սևանա լճի սառցակալման հետևանքները



Սևանա լճի սառցակալումը կարող է լուրջ վսանգների բերել. իրականում լճի սառցակալումը շատ ցածր մակարդակի վրա է, և դեռևս է լուրջ միջոցառումներ ձեռնարկել սեղի կենդանական աշխարհը պահպանելու համար:

Այս մասին մեզ հետ զրույցում ասաց «Սիվիլիզյու» հասարակական կազմակերպության փորձագետ, բնապահության Սիլվա Աղամյանը:

Նշենք, որ «Սևան Ազգային թանկարժեք» թանկարժեքային բաժնի շեռույց Արսակ Սարգսյանը ասել էր, որ Սևանա լճի սառցակալումը լճի թռչունաբնակի համար աղետալի իրավիճակ է ստեղծել: Սևանի սառցակալման հետևանքով հետաձգվել է բազմաթիվ թռչունաբնակների չուն դեղի Գեղարունիի մարզ, սեղում մնացող թռչունները հեռացել են աղետալի վայրեր և այն թռչունները, որոնք չեն կարողացել հեռանալ՝ ոչնչացել են մեծաքանակ խմբերով: «Եթե թռչունը չունի կերակրման բազա, կարող է կան հեռանալ այդ սարածից, կան թռչունը, որը սովոր է այդ սարածից և չի հեռանում, կարող է ուղղակի սովի մասնավել և այստեղ մենք կունենանք լուրջ խնդիրներ թռչունային կազմի հետ:

Մենք կունենանք մի բան՝ թռչուններն ուղղակի Հայաստանի սարածից կհեռանան հարևան հանրապետություններ», - նշեց Աղամյանը:

Ըստ նրա՝ ՀՀ բնապահության նախարարությունը դեռևս է կանխավ միջոցառումներ ձեռնարկել, քանի որ Հայաստանում այս սարի կանխատեսվում էր բավական ցածր մակարդակի վրա: Աղամյանի խոսքով՝ հիմա շատ ավելի դժվար է կանխարգելիչ միջոցառումներ անելը:

Սիլվա Աղամյանի շեղեկացմամբ՝ վաղը սեղի է ունենալու բնապահության նախարարության հասարակական խորհրդի միջոցով, որտեղ բարձրացվելու են Սևանա լճի սառցակալման հետևանքով առաջացած խնդիրները: Աղամյանը նաև առաջարկելու է օգտագործել նման խնդիրների լուծման միջոցառումներ փորձը: «Այլ երկրներում կա այսպիսի մի փորձ՝ սեփականաբար սառցակալած լճից բացում են որոշակի սարածից, որտեղից թռչունները կարողանան կերակրվել: Եվ կա մեկ ուրիշ ճանապարհ, երբ բնապահականները և կենդանաբանները փորձում են ուղղակի կերակրել թռչուններին», - ասաց նա:

Նախագիծը՝ Արծրուն Պեղանյանի
խմբագիր՝ Սանվել Սկրչյան
Ձևավորումը՝ Նարինե Բաղդասարյանի
Նյութերը՝ ՀՀ ԲՆ Տեղեկատվության և հասարակության հետ կապերի վարչության

Հեռախոս՝
011 818 517